ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

«ELECTRO POWER
SYSTEMS OPERATOR»

CLOSED JOINT - STOCK COMPANY

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0009, ԱԲՈՎՅԱՆ 27, Հեռ՝ (+37410) 524725, Ֆաքս՝ (+37410) 524725, էլ.փոստ ՝ office@energyoperator.am
27 ABOVYAN str.,0009 YEREVAN, RA Tel: (+37410) 524725, Fax: (+37410) 547317, E-mail: office@energyoperator.am

No._____

«15» 10 2025 թ.

«ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ» ԱՁ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

/ հասցե՝ Ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Չեխովի փ., շ16, բն. 10,
հեռ.՝ +374 55114101, էլ հասցե՝ pchelper2018@gmail.com/

Հարգելի՛ պարոն Նիկողոսյան,

Տեղեկացնում ենք, որ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի և «ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ» ԱՁ-ի միջև 2025 թվականի հուլիսի 22-ին կնքված ԷԷՀՕ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-3 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում, պատվիրատուի կողմից ապրանքի մատակարարման պահանջը ներկայացվել է 2025 թվականի հուլիսի 28-ին, սակայն մասնակիցի կողմից սահմանված ժամկետում մինչև սույն թվականի օգոստոսի 27-ը ներառյալ մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 2025 թվականի հոկտեմբերի 14-ից «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի ամբողջական լուծվել է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այմանագիր կնքելիս Ձեր կողմից սահմանված կարգով ներկայացրել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծման արդյունքում՝ ԷԷՀՕ-ԷԱՃԱՊՁԲ-25/5 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պետք է ապահովվի որակավորման ապահովում՝ 9,387.00 (ինը հազար երեք հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամի չափով, և պայմանագրի կատարման ապահովում՝

6,258.00 (վեց հազար երկու հարյուր հիսունութ) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի 247460049700000 հաշվեհամարին:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին:

Խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ԱՊԻՏՈՆՅԱՆ

Կ.Տ.